

Շահանե ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ

**ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅՈՒՆԸ
(հայերենի զուգադրությամբ)**

Հոդվածում քննության է առնվում դարձվածաբանության կարևոր հարցերից մեկը՝ դարձվածաբանական միավորների պատկերային նկարագիրը՝ հայերենի զուգադրությամբ: Բառարաններից և գեղարվեստական գրականությունից քաղված օրինակների հիման վրա վեր են հանվում խոսակցական ֆրանսերենի դարձվածքների ոճիմաստային առանձնահատկությունները, որոնք հաճախ ավելի գունեղ են ու տպավորիչ, քան գրական ֆրանսերենի դարձվածամիավորները, պատճառաբանված չեն և դժվար վերծանելի: Հայերենի հետ զուգադրումը առանձին դեպքերում ի հայտ է բերում դարձվածային պատկերների որոշակի նմանություն, ինչը փոխազդեցությունների կամ պատճենումների հետևանք չէ, այլ՝ կյանքի և կենսագործունեության ընդհանրության արդյունք:

Բանալի բառեր՝ դարձվածաբանություն, պատկերավորություն, խոսակցական ֆրանսերեն, խոսակցական հայերեն, զուգադրություն, պատճառաբանվածություն, ոճիմաստային երանգներ, մշակութային յուրահատկություններ

Յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանություն պատկերանշանային ուրույն մի համակարգ է, որում պարզորոշ ուրվագծվում են տվյալ ժողովրդի ապրած միջավայրը, կյանքի յուրահատուկ պայմաններն ու դրանց հողի վրա առաջ եկած ու ձևավորված հոգեկան նկարագիրն ու ազգային բնավորության գծերը, մտաշխարհը, հավատալիքները, կենսահայեցողության մեջ առկա ընդհանրությունները, բարոյական ըմբռնումները, ճաշակը, արժանիքների գնահատման ձևերն ու չափանիշները և այլն, այսինքն՝ լայն առումով մշակույթի և լեզվամտածողության մեջ կայունացած ավանդույթները:

Խոսակցական ֆրանսերենը ինքնին լեզվական փոփոխականության (variabilité, вариативность) ցայտուն արտահայտություններից մեկն է, լեզվում առկա տարբերակների և խոսքում արտահայտության միջոցների տարբերակայնության փոխադարձ կապի դրսևորում, և այստեղ է, որ հոգեբանական և իրադրային գործոնները առանձնահատուկ կարևորություն են ստանում որպես լեզվական արտահայտչամիջոցների փոփոխականության սկզբնաղբյուրներ:

Ուսումնասիրված լեզվանյութը ի հայտ է բերում խոսակցական ֆրանսերենի դարձվածքների ինքնատիպ պատկերային նկարագիրը:

Նշենք նաև, որ դրանց գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է կեն-
ցաղին, մարդու բնավորության գծերին՝ եսամոլությանը, ձրիակերու-
թյանը, ծուլությանը, ժլատությանը, շահամոլությանը, կեղծավորությանը,
գինեմոլությանը, որկրամոլությանը, աներեսությանը, հիմարամտությա-
նը և այլն, ինչը բնորոշ է ցանկացած լեզվի խոսակցական ոճին: Ավելաց-
նենք, որ գրական և խոսակցական ֆրանսերենի դարձվածքները համե-
մատելիս երևան է գալիս նաև այն, որ գրական ֆրանսերենի դարձվածք-
ներում ամփոփված պատկերները ոճիմաստային նշույթավորվածության
և ուժգնության առումով, կարծես, ավելի չեզոք են, ավելի ընդհանուր,
իսկ խոսակցական ֆրանսերենի դարձվածքներն, ընդհակառակը, ավելի
գունեղ ու տպավորիչ են ու բաղադրիչային-իմաստային վերլուծության
առումով հաճախ դժվար մեկնաբանելի կամ ամբողջովին անվերծանելի:

Ասվածը հաստատելու համար ներկայացնենք առանձին հասկացու-
թյունների բառիմաստային դաշտերին բնորոշ ֆրանսերեն և հայերեն
խոսակցական դարձվածքներ, օտար միավորները *բառացի թարգմանու-
թյամբ*՝ պատկերային տարբերություններն ընդգծելու և ժողովրդախո-
սակցական արտահայտությունների ոճիմաստային երանգները ցայտուն
ու թափանցիկ դարձնելու համար: Այսպես՝

1. աննկատ հեռանալ, փախչել, փախուստի դիմել, ճողոպրել

mettre les voiles (բառացի՝ առագաստները բանալ, պարզել),

planter un drapeau (բառացի՝ դրոշակ ցցել),

affûter ses pincés (բառացի՝ չանչերը սրել),

se faire la jaquette (բառացի՝ բաճկոնը հագնել),

se faire la malle (բառացի՝ ճամպրուկը դարսել),

prendre ses jambes à son cou (բառացի՝ ոտքերը վիզն առնել),

jouer de l'escarpin (բառացի՝ մուճակը գործի գցել) և այլն:

Հայերենում՝ արանքը ճղել, կծիկը դնել, գլուխը պրծացնել, պուկ
աննել, պուկ տալ, փախս առնել, փախս տալ և այլն:

- Au comble de l'énervement, ma noble maîtresse vint dans la province
française se cacher, se terrer.

- Mais le roi, qu'est-ce qu'il a dit, votre roi, lorsqu'il s'est aperçu qu'elle avait
mis les voiles. (J. Audiberti, L'Effet Glapion, p. 204)

- Նյարդայնության գագաթնակետին հասած իմ ազնվագարմ տիրու-
հին եկավ ֆրանսիական նահանգ՝ թաքնվելու, ծվարելու:

- Իսկ թագավորը, ի՞նչ ասաց ձեր թագավորը, երբ տեսավ, որ
տիրուհին աննկատ հեռացել է:

- Ah ! ça me travaillait la nénette ! Je voyais plus que ça comme future
chance ! ... Je me ferai la malle un beau matin ... sans tambour ni trompette ! ...
Ah ! c'était mon projet fervent ... (L.-F. Céline, Le Pont de Londres, p. 287)

- Օ՛հ, այդ միտքն ինձ հանգիստ չէր տալիս: Միայն դրանում էի տես-
նում ապագայի հույսը: Մի գեղեցիկ առավոտ աննկատ կկապեի ճամպ-
րուկս ... դա իմ բուռն ցանկությունն էր:

2. որկրամոլ՝ շատակեր լինել

se caler les amygdales (բառացի՝ նշագեղձերը լցնել՝ խցկել),
 être une bonne (une belle) fourchette (բառացի՝ լավ պատառաքաղ լինել),
 être porté sur la gueule (բառացի՝ դեպի բերանը՝ երախը հակված լինել),

se caler les joues (բառացի՝ այտերը լցնել),
 il vaut mieux l'avoir en photo qu'à table (բառացի՝ ավելի լավ է լուսանկարն ունենալ, քան իրեն՝ սեղանի շուրջ),
 ne pas avoir la gale aux dents (բառացի՝ ատամները քոստած չլինել),
 manger (boire) à ventre déboutonné (բառացի՝ որովայնի կոճակներն արձակած ուտել, խմել),

s'en mettre (s'empiffrer) plein les trous de nez (jusqu'aux trous de nez) (բառացի՝ լցնել մինչև քթանցքները),

ne pas laisser rouiller ses dents (բառացի՝ չթողնել, որ ատամները ժանգոտեն),

avoir une bonne descente (բառացի՝ լավ վայրէջք ունենալ),
 creuser sa tombe avec ses dents (բառացի՝ ատամներով սեփական գերեզմանը փորել),

faire trembler le lard au charnier (բառացի՝ ոսկորների՝ ոսկրանոցի ճարպը երերացնել),

travailler des mâchoires (բառացի՝ ծնոտով աշխատել, ծնոտը աշխատեցնել) և այլն:

Հայերենում՝

մի բերան անել, յոթը գցել՝ կոխել, ծակբողազ լինել, յոթ մատները բերանը կոխել, հուպ տալ՝ կուլ տալ, և այլն:

Tu seras bien là-bas, Simon ... Y a du grand air ... *tu t'caleras les joues*, chez ton parrain. Y font de bonnes galettes ... (Y. Gibeau, Allons z'enfants, p. 235)

Այնտեղ քեզ լավ կզգաս, Սիմոն ... օդը մաքուր է ... կնքահորդ տանը ուզածիդ չափ կուտես ... նրանք լավ բլիթներ են պատրաստում:

Certain, qu'ils se régalent à la cuistance ... Ils s'empiffrent plein les trous de nez ! (A. Boudard, Cinoche, p. 172)

Հաստատ է, որ նրանք լավ ուտում են ճաշ պատրաստելիս, որքան կարող են հուպ են տալիս:

3. արբել, հարբեցողությամբ զբաղվել, գինովանալ, կոնծել, շատ խմել, խմիչքի հանդեպ թուլություն ունենալ

avoir le gosier en pente (բառացի՝ կոկորդը զառիվայր՝ զառիթափ լինել),

avoir une éponge dans le gosier (բառացի՝ կոկորդում սպունգ ունենալ),
 lever le coude (բառացի՝ արմունկը բարձրացնել),

se noircir (se piquer, salir) le nez (բառացի՝ քիթը սևացնել՝ աղտոտել),

avoir son paquet (բառացի՝ իր փաթեթն ունենալ՝ ստացած լինել),

être bourré comme une valise (բառացի՝ ճամպրուկի պես խցկված լինել),
être rond comme une queue de pelle (բառացի՝ բահի կոթի պես կլոր լինել),
avoir son plumet (բառացի՝ իր փետրափունջն ունենալ),
caresser la bouteille (բառացի՝ շիշը գուրգուրել՝ փայփայել՝ շոյել) և այլն:

Հայերենում՝ կոկորդը թրջել՝ տաքացնել, լուլ խմել՝ քցել, կատարը տաքացնել, գլուխը՝ գլխին քաշել, շան պես լակել, և այլն:

Ah ! j'dis pas que ces deux – là n'soient pas un peu garnis, ni un peu vaseux ... Sans être tout à fait mûrs, ils ont l'nez sale, quoi ! (H. Barbusse, Le Feu, t. 2, p. 77)

Դե ես չեմ ասում, թե այս երկուսը խմած և կամ՝ շշմած վիճակում չեն ... Բայց առանց լուլ խմած լինելու, կատարները, այնուամենայնիվ, տաքացրել են:

A onze heures, Mammouth était ivre mort, *bourré comme une valise*, à un départ de vacances. (R. Fallet, Le Triporteur, p.312)

Ժամը տասնմեկին Մամութը լուլ խմած էր, շան պես լակած:

4. խելապակաս, հիմար, դմբո, նաև՝ թանձրամիտ, բթամիտ լինել
grésiller à la (de la) carafe (բառացի՝ գլխից ճարճատյուններ լսվել),
avoir une chambre à louer (բառացի՝ վարձու, վարձով տրվող սենյակ ունենալ),

avoir un petit vélo dans la tête (բառացի՝ գլխում մի փոքրիկ հեծանիվ ունենալ),

avoir une araignée au plafond (բառացի՝ առաստաղում սարդ ունենալ),

pomme à l'eau (բառացի՝ ջրի գետնախնձոր),

avoir un petit pois dans la tête (բառացի՝ գլխում մի փոքրիկ ոլոռ ունենալ),

être bouché à l'émeri (բառացի՝ հղկաքարով խցանված լինել) և այլն:

Հայերենում՝ ծալը՝ տախտակը պակաս, գունդ գլուխ, աղոթած էշ, տանձի կոթ, վերնատունը դատարկ, գլուխը հաստ և այլն (լինել):

Elle murmura, tendre:

- *Pomme à l'eau* ... tu ne comprendras jamais rien. (R. Fallet, Un idiot à Paris, p. 195)

Նա քնքշորեն շշնջաց.

- Դմբո՛... դու երբեք ոչինչ չես հասկանա:

5. ձանձրացնել, զզվեցնել, համբերությունից հանել

scier le dos à qn (բառացի՝ մեկի մեջքը սղոցել),

courir sur le haricot à qn (բառացի՝ մեկի գլխի վրա վազել),

donner (filer) de l'eczéma à qn (բառացի՝ մեկին էկզեմայով վարակել):

Հայերենում՝ մեկի գլուխը տանել, մեկի նյարդերը սղոցել, ականջը տանել՝ խարտոցել, ականջի միսն ուտել, երեսը մաշել, երեսից կախ ընկնել և այլն:

J'ai traversé à ce moment-là une sale période. La maison de meubles a commencé à me *courir sur le haricot*. Je le trouvais drôlement moche de continuer mes simagrées à des cons de clients. (A. Sergent, Je suivis ce mauvais garçon, p. 63)

Այդ ժամանակ շատ վատ մի շրջան ապրեցի: Կահույքի վաճառատունը սկսեց նյարդերս սղոցել: Ես ինձ անչափ զավեշտալի վիճակում էի տեսնում, երբ շարունակում էի ծեքծեքվել հիմար հաճախորդների առաջ:

6. Ժլատ, կծծի, ձեռքը փակ

être près de ses sous (բառացի՝ իր դրամին մոտ՝ դրամից անբաժան լինել),

les lâcher avec des élastiques (բառացի՝ դրամը ռետիններիզով բաց թողնել),

avoir des oursins dans sa poche (բառացի՝ գրպանում փշոտ ծովախոզեր ունենալ),

avoir les ongles crochus (բառացի՝ կեռ եղունգներ ունենալ) և այլն:

Հայերենում՝

լվից ճրագու հանող, լվից ձեթ քամող, օձ խուզող, օձ կնտող, մութ տեղը մազ մանող, ձեռքը հուպ և այլն:

Ամենից հետաքրքրական են այն դարձվածքները, որոնք պատճառաբանված չեն, որոնց իմաստը չի բխում դարձվածքի բաղադրիչներից: Այս դարձվածքների ներքին ձևը մթազնաձ է, անվերծանելի և պահանջում է որոշակի պատմալեզվաբանական ուսումնասիրություն և ստուգաբանական բացահայտումներ /Lacotte, 2014; Pouget, 2009; Назарян, 1968/: Դիտարկենք մի քանի օրինակ.

Avoir du foin dans ses bottes դարձվածքի բառացի թարգմանությունն է՝ ճուղկավոր կոշիկներում ծղոտ, չոր խոտ ունենալ, իսկ նշանակությունը՝ գրպանը լիքը լինել, հարուստ՝ ունևոր՝ նյութապես ապահովված՝ փողատեր լինել: Բացատրությունը հետևյալն է.

Ժամանակին ճուղկավոր կոշիկների բարձրությունը որևէ դասի պատկանելու նշան էր. որքան բարձր էին ճիտքերը՝ սրնքապանները, այնքան բարձր էր տիրոջ դասային պատկանելությունը: Եվ քանի որ ճիտքերը երբեմն այնքան բարձր էին լինում, որ լավ չէին գրկում սրունքներն ու խանգարում էին քայլելուն, մարդիկ դրանց մեջ ծղոտ էին լցնում: Որքան բարձր, այնքան շատ ծղոտ, այսինքն այնքան ավելի ունևոր, հարուստների դասից:

Entre la poire et le fromage դարձվածքի բառացի թարգմանությունն է՝ տանձի ու պանրի միջև, իսկ նշանակությունը՝ ազատ, անկաշկանդ (ինչպես ճաշի ավարտին են զրուցում՝ արտահայտվում), նաև՝ նպաստավոր, բարենպաստ, հարմար պահի: Բանն այն է, որ անցյալում Ֆրանսիայում սովորություն կար ճաշի ավարտին նախ մրգերն ուտել և հետո միայն՝ պանիրը:

Finir en queue de poisson, բառացի՝ ձկան պոչով վերջանալ, նշանակում է՝ ի դերն ելնել, անսպասելիորեն ավարտվել, առանց սպասված արդյունքի, հուսախաբ անել՝ լինել:

Դարձվածքն առնչվում է այն պատկերացմանը, որ ջրահարսի գեղասքանչ մարմինը հանկարծ «ընդհատվում է» ձկան պոչով ու հիասթափություն առաջացնում:

C'est la fin des haricots, բառացի՝ սա լոբու (բակլայի) վերջն է, նշանակում է՝ ամեն ինչ կորած է, սա արդեն վերջն է:

Բացատրությունը հետևյալն է.

Անցյալում ֆրանսիական շատ գիշերօթիկ դպրոցներում լոբին (բակլան) ամենաշատ օգտագործվող սնունդն էր, երբ այլևս ուրիշ բան չկար աշակերտներին կերակրելու համար: Եվ երբ լոբու պաշարները նույնպես սպառվում էին, արդեն չգիտեին, թե ինչով կարելի է աշակերտներին սնել: Այդ պատճառով էլ անելանելի վիճակում հայտնվելիս ասում էին «սա արդեն լոբու վերջն է»:

La grande horreur, le tumulte, le malaise, *la fin des haricots*, l'état de siège ...
(J. Prévert, *Paroles*, p.12)

Ահավոր սարսափը, խառնաշփոթը, տագնապը, ամեն ինչի վերջը (սպառված լինելը), պաշարման մեջ գտնվելը ... :

Montrer le bout de l'oreille, բառացի՝ ականջի ծայրը ցույց տալ, նշանակում է՝ ականա իրեն մատնել, մտադրությունը երևան հանել, բացահայտել, հայտնի դարձնել:

Դարձվածքի աղբյուրը Լաֆոնտենի «Առյուծի մորթիով ավանակը» առակն է, որտեղ առյուծի մորթի հագած ավանակը ահ ու սարսափ է տարածում շուրջ բոլորը՝ իրեն կենդանիների թագավոր ձևացնելով: Սակայն շուտով խաբեբայությունն ի հայտ է գալիս, երբ մորթու տակից կախված ականջը մատնում է նրան:

Tirer le diable par la queue, բառացի՝ սատանայի պոչից քաշել, նշանակում է՝ հազիվհազ, մի կերպ ապրուստը հոգալ, գոյությունը քաշ (քարշ) տալ, ծայրը ծայրին բերել՝ հասցնել:

Դարձվածքի հիմքում ընկած է հետևյալ սին հավատալիքը. մարդ արարածն առանց դրամի մնացած լինելու և այն վաստակելու որևէ միջոց չունենալու պատճառով ստիպված դիմում է, ոչ ավել՝ ոչ պակաս, սատանային: Սակայն վերջինս մերժում է օգնել և մեջքով շրջվում է դեպի նա: Դժբախտ մարդը, ջանալով ետ պահել սատանային, հուսահատ քաշում է նրա պոչից:

Lucrece Borgia – De l'argent ! et pour quoi faire ?

Gubetta – Pardieu ! pour en avoir. D'ailleurs, il n'y a rien qui soit plus espagnol que d'avoir l'air gueux et de tirer le diable par la queue (V. Hugo, *Lucrece Borgia, Acte I, II, 1*)

Լուկրեցիա Բորջա – Էլի՛ դրամ, ինչի՞ համար:

Գուրետտա – Գրողը տանի', ունենալու համար: Ի դեպ, չկա որևէ բան, որ այնքան իսպանական լինի, որքան մուրացիկի տեսք ունենալն ու հազիվիազ ապրուստ հոգալը:

Այսպիսով, ընդգծված պատկերայնությունը, բանադարձումների ու դարձույթների առատությունը խոսակցական ֆրանսերենը գրականի համեմատությամբ դարձնում են ավելի հյութեղ ու ոճարտահայտչական առումով հագեցած:

Անապացույց չլինելու համար դիտարկենք խոսակցական ֆրանսերենում ամենից հաճախ հանդիպող ոճահնարները հայերեն բառացի թարգմանությամբ ու համարժեքներով, ինչպես նաև մեր տրամադրության տակ եղած բնագրային օրինակներով, ինչը կհաստատի ասվածը: Միաժամանակ խոսակցական ֆրանսերենի դարձվածքների արտահայտչամիջոցներն ընդգծելու և ավելի ցայտուն դարձնելու համար զուգահեռաբար ներկայացնում ենք հնարավոր գրական համարժեքները, որոնք կարող են լինել դարձվածք, ազատ բառակապակցություն կամ պարզապես՝ բառ:

1. Պատկերավոր համեմատություն (comparaison imagée), որը խոսակցական լեզվում տարածված ոճահնարներից մեկն է, երբ համեմատելի բաղադրիչին վերագրվում է նրան օտարոտի մի հատկանիշ, երբ համեմատելի և համեմատող բաղադրիչների միջև զուգահեռների անցկացումը կարող է մոտեցնել շնչավոր + շնչավոր, շնչավոր + անշունչ, անշունչ + անշունչ գոյականական զույգերին: Այսպես՝

mentir comme un arracheur de dents – շան պես ստել, անամոթաբար խաբել (բառացի՝ ատամ քաշողի նման ստել), *գրակ. mentir comme un respire* (բառացի՝ շնչելու պես ստել)

bourré comme une valise – թունդ հարբած, լույ խմած, շան պես լակած (բառացի՝ ճամպրուկի պես խցկված), *գրակ. complètement ivre* (բառացի՝ ամբողջովին գինով)

A onze heures, Mammouth était ivre mort, **bourré comme une valise** à un départ de vacances. (*R. Fallet, Le Tripoteur, p. 312*)

Ժամը տասնմեկին Մամմութը շան պես լակած էր, արձակուրդ մեկնողի խցկած ճամպրուկի նման:

gracieux (aimable, poli ...) comme une porte de prison – շատ անբարեհամբույր, ոչ սիրալիր, բիրտ, կոպիտ (բառացի՝ բանտի դռան պես սիրալիր), *գրակ. très désagréable* (խիստ ստհաճ)

On dit, par dérision: “**Gracieux comme une porte de prison**”, et on dit vrai. Celle-ci ne faisait pas mentir le proverbe : solidement ferrée et renforcée de clous, avec un guichet étroitement grillagé, elle avait un aspect sinistre.

(*E. Le Roy, Jacquou le Croquant, p.77*)

Կատակով ասում են. «Բանտի դռան պես սիրալիր» և ճիշտ են ասում: Այդ դուռը չի հերքում առածը. հիմնովին երկաթապար ու գամերով ամրացված, կուռ վանդակացանցով, այն չարագուշակ տեսք ունի:

2. Հակիմաստություն, հակաբերություն (antiphrase):

Իմաստի այլափոխումը որևէ հնարի մեջ այնքան ակնբախ չէ, որքան՝ հակիմաստության, երբ ասվում է ճիշտ հակառակն այն բանի, ինչը պիտի ասվեր, մի երևույթ, որ հաճախ առկա է հեգնանքի կամ նվազասույթի մեջ:
c'est pas dégueulasse (c'est pas dégueu) – շատ համեղ է (բառացի՝ զզվելի՝ խորշելի չէ), *գրակ. c'est délicieux, très bon* (շատ համեղ է, ընտիր է)

ce n'est pas (c'est pas) la gloire – միջակ է, ոչնչով աչքի չի ընկնում, մի բան չէ (բառացի՝ պարծանքի առարկա չէ), *գրակ. c'est médiocre*
c'est bien ma chance! – էլի բախտս չբերեց (բառացի՝ սա էլ իմ բախտը), *գրակ. encore une fois je n'ai pas eu de chance*
c'est pas de la tarte – խաղ ու պար չէ, դժվար բան է (բառացի՝ տորթ չէ), *գրակ. c'est pénible* (ծանր բան է)

Elle [les punaises] grimpaient jusqu'au grillage qui nous servait de plafond et elles se laissaient tomber. Dormir dans ces conditions, ce n'était pas de la tarte.

(F. Guillo, *Le P'tit Francis*, p.51)

Փայտոջիլները մագլցում էին մինչև վանդակացանցը, որը մեզ համար առաստաղ էր, հետո իրենք-իրենց վայր ընկնում: Այս պայմաններում քնելը խաղ ու պար չէր:

3. Օքսիմորոն, նրբաբանություն (oxymore), յուրահատուկ մի բանադարձում, որի ոճական ուժգնությունը բառերի իմաստային – տրամաբանական անսպասելի անհամատեղելիության մեջ է: Հայտնի է, որ լեզվական նշանը պատկերավոր պատճառաբանվածությամբ օժտելը լեզվի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Հակադիր միտումն այն է, երբ այդ նշանը գործածության ուժով ժամանակի ընթացքում կորցնում է այդ պատճառաբանվածությունը, արտահայտչականության առումով մի տեսակ «մաշվում»: Այդ ժամանակ առաջ է գալիս լեզուն նոր արտահայտչամիջոցներով լրացնելու պահանջ, և օքսիմորոնը այդ պակասը լրացնելու լավագույն եղանակներից է:

fin comme du gros sel – կոշտ ու կոպիտ, անտաշ, նաև՝ *փխբ.* Չափազանց հիմար, տխմար (բառացի՝ խոշոր աղի պես նուրբ, *փխբ.* նրբամիտ), *գրակ. grossier, pas très malin*

il comprend vite mais il faut lui expliquer longtemps – թանձրամիտ՝ տկարամիտ է, խելացի չէ, արագ չի ըմբռնում (բառացի՝ արագ է հասկանում, բայց երկար պետք է բացատրել), *գրակ. il n'est pas très intelligent*

4. Փոխաբերություն (métaphore), դարձույթ, որ ոճահնարների մեջ ամենից տարածվածն է, ամենաշատ ուսումնասիրվածը.

être bas de plafond – բթամիտ՝ անխելք՝ հիմար լինել (բառացի՝ առաստաղի պես ցածր լինել), *գրակ. être intelligent, borné, à l'esprit lourd*

ce n'est pas une lumière – խելքի շտեմարան չէ (բառացի՝ ճրագ՝ կանթեղ չէ), *գրակ. il n'est pas très intelligent*

avalier des couleuvres – վիրավորանքը կուլ տալ, խոսքի տակ մնալ, անարգանքին չպատասխանել (բառացի՝ լորտուններ կուլ տալ), *գրակ. supporter des affronts*

la grange est pleine avant la moisson – մինչև ամուսնությունը հղի լինել (բառացի՝ մինչև հունձը ամբարը լեցուն լինել), *գրակ. être enceinte avant le mariage*

ne rien avoir dans le buffet – շատ քաղցած լինել, փորը վեց-վեց անել (բառացի՝ բուժետում ոչինչ չունենալ), *գրակ. avoir une faim de loup*

ne pas en ficher (en foutre) une rame – մատը մատին չխփել՝ չտալ, ոչինչ չանել, ծուլանալ, ալարել (բառացի՝ թին՝ թիակը տեղից չշարժել), *գրակ. se laisser aller à la paresse, faire le paresseux*

En tout cas, au-dessus des lieutenants, il y a des capitaines et ceux-là alors, **ils ne foutent pas une rame** car ils sont purement honorifiques. (*J. Giono, Un roi sans divertissement, p. 108*)

Ամեն դեպքում լեյտենանտներից վեր կան կապիտաններ, որոնք մատը մատին չեն տալիս, քանի որ լույ պատվո կապիտաններ են:

être (se trouver) dans de jolis (de beaux) draps – դժվարին՝ օրհասական կացության մեջ գտնվել (բառացի՝ գեղեցիկ հանդերձանքի մեջ լինել), *գրակ. être dans une situation embarrassante*

Il mettrait saisie sur la boîte ... C'était dans la fouille ! C'était encore lui le plus vicelard !... **On était dans des jolis draps** ! ... (*L. -F. Céline, Mort à crédit, Livre de Poche, p. 341*)

Նա կալանք կղներ գույքի վրա ... հաստատ բան էր: Էլի ինքն էր ամենաճարպիկ խորամանկը: Դժվարին կացության մեջ էինք:

le drapeau noir flotte sur la marmite – ընտանիքի նյութական վիճակը ողբալի է (բառացի՝ կաթսայի վերևում սև դրոշն է ծածանվում), *գրակ. la situation financière du ménage est dramatique*

Ce coup – ci, un peu plus douloureux, puisque **le drapeau noir allait bientôt flotter** sur la marmite familiale ... (*A. Boudard, Cinoche, p. 110*)

Այս վերջին հարվածն է՛լ ավելի ցավոտ էր, քանի որ դրանից ընդհանրի նյութական վիճակը պիտի ողբալի դառնար:

5. Հակադրություն (antithèse)

avoir du pour et du contre – թե՛ դիմացի, թե՛ ետևի կողմից մարմնեղ՝ փարթամ լինել (կնոջ մասին), (բառացի՝ ունենալ թեր և դեմ կողմերը), *գրակ. avoir de l'ampleur dans les formes*

ce n'est pas demain la veille – դա երբեք չի լինի՝ չի կատարվի՝ տեղի չի ունենա, լինելու բան չէ (բառացի՝ նախորդ օրը վաղը չէ), *գրակ. cela n'arrivera jamais*

ne faire ni chaud ni froid – անտարբեր թողնել, որևէ նշանակություն՝ կարևորություն չունենալ (բառացի՝ ոչ տաք անել, ոչ պաղ), *գրակ. être indifférent à qn*

[...] le fameux tableau surréaliste belge dont l'unique singularité est qu'on y voit un cheval galoper sur tomate ne me suggère rien qui excède le dérèglement des proportions relatives d'un quadrupède et d'un légume, **ce qui ne me fait ni chaud ni froid.** (*M. Leiris, Frêle Bruit, p. 361*)

... բելգիական սյուրռեալիզմի նշանավոր կտավի միակ յուրահարկությունն այն է, որ տեսնում ես լոլիկի վրա քառապրոփ արշավող մի ձիու, ինչն ավելին չի ներշնչում, քան չորքուտանու և բանջարեղենի համամասնության խաթարումը, մի բան, որ ինձ անտարբեր է թողնում:

6. Չափազանցություն (hyperbole)

manger le diable et ses cornes – լափել, խժոել, ազահաբար ուտել (բառացի՝ ուտել սատանային ու նրա կոտոշները), գրակ. *manger comme un goinfre, se goinfrer*

bête à manger du foin – շատ հիմար՝ տխմար մարդ (բառացի՝ խոտակեր կենդանի), գրակ. *très bête, tout à fait stupide*

Ben, tu ne vois pas ce qu'elles font [...], mais alors **tu es bête à manger du foin !** (*J.-P. Chabrol, La Gueuse, p. 137*)

Դու չես տեսնում, թե այդ կանայք ինչ են անում [...], դե ուրեմն տխմարի մեկն ես:

se tordre de rire (rire à se tordre) – ծիծաղից մեռնել՝ պայթել՝ գալարվել՝ ջղաձգվել (բառացի՝ ծիծաղից գալարվել), գրակ. *rire aux éclats*

[...] de jolies actrices qui n'avaient pas été prévenues, mais qui lançaient aux autres des œillades de complicité méchante, **se tordaient de rire**, avec de violents éclats [...] (*M. Proust, A la recherche du temps perdu, t. II, p. 173*)

Գեղեցիկ դերասանուհիներ, որոնք նախապես հակված չէին դա անել, չարածճի ու սիրապոչոր հայացքներ էին ուղղում ուրիշներին ու պոռթկուն ծիծաղից գալարվում:

du tonnerre (de Dieu) – արտառոց, արտակարգ. լավ, սքանչելի, հիանալի

(բառացի՝ աստծո որոտյուն), գրակ. *extraordinaire, admirable*

7. Նվազասույթ (litote), որ չափազանցության հակադիր բանադարձումն է

C'est pas la moitié d'un imbécile – չես ասի, թե հիմար է, խելքը տեղն է, շատ խելացի է (բառացի՝ հիմարի կեսը չէ, կիսով չափ հիմար չէ), գրակ. *c'est qn de très intelligent*

8. Փոխանունություն (métonymie)

causer (parler) au goulot – շի հետ ընկերություն անել, շատ խմել, գինեմոլ լինել, շից խմել (բառացի՝ շի վզիկի հետ խոսել՝ զրուցել), գրակ. *boire en abondance, se souler*

à bas la calotte ! – անկցի՝ կղերը (կղերականությունը) (բառացի՝ անկցի թասակը), գրակ. *à bas le clergé !*

être une bonne fourchette – շատակեր՝ որկրամուլ լինել (բառացի՝ լավ պատառաքաղ լինել), *գրակ. être un gros mangeur, avoir un solide appétit*

9. Խաչաձևում, խաչակերպ (chiasme)

c'est blanc bonnet et bonnet blanc – մեկ է, միևնույնն է, ճիշտ նույն բանն է. էշը չէ, պոչն է (բառացի՝ սպիտակ գլխարկ է ու գլխարկ է սպիտակ), *գրակ. cela revient au même, c'est exactement la même chose*

Des vagabonds et des nomades, c'est blanc bonnet et bonnet blanc.

(L. Aragon, *Blanche ou l'Oubli*, p. 243)

Թափառաշրջիկներ ու քոչվորներ, դա նույն բանն է:

10. Շրջասություն (périphrase)

fleur de nave(t) – հիմար, տխմար, բթամիտ՝ ապուշ մարդ (բառացի՝ շաղգամի ծաղիկ), *գրակ. personne très sott, imbécile*

il n'aura plus mal aux dents – նա մահացել է (բառացի՝ նա այլևս երբեք ատամնացավ չի ունենա), *գրակ. il a rendu l'âme*

Շրջասությունը հաճախ խաչաձևվում է մեղմասության հետ:

11. Մեղմասություն (euphémisme)

envoyer promener qn – վռնդել, գրողի ծոցն ուղարկել (բառացի՝ ուղարկել գրոսնելու), *գրակ. se débarrasser de qn*

être un peu gai – մի քիչ գինով՝ քեֆը լավ լինել (բառացի՝ մի քիչ ուրախ լինել), *գրակ. être légèrement ivre*

12. Հեգնանք (ironie)

batterie de cuisine – զինվորականի՝ շքանշաններով ու մեդալներով զարդարված կուրծք (բառացի՝ խոհանոցային ամանեղեն), *գրակ. ensemble des médailles et décoration portées par un militaire*

être à encadrer – ծիծաղելի՝ ծիծաղաշարժ լինել (բառացի՝ շրջանակի մեջ դնելու բան լինել), *գրակ. être extraordinaire dans son genre*

Քիչ չեն դեպքերը, երբ դարձվածքն ամփոփում է մեկից ավելի ոճահնարներ.

[պատկերավոր համեմատություն + հեգնանք]

aimer comme les chiens aiment les coups de bâton – աչքով աչք չունենալ, ամենևին չսիրել (բառացի՝ սիրել ինչպես շները փայտի հարվածներն են սիրում)

[հեգնանք + հակաբերություն]

léger comme un éléphant – փղի պես ծանրաշարժ՝ անճարպիկ (բառացի՝ փղի պես թեթևաշարժ)

[փոխաբերություն + հեգնանք]

briller par son absence – բացակայությամբ փայլել

[համեմատություն + հակիմաստություն + օքսիմորոն]

droit comme une faucille – բոլորովին ծուռ՝ թեք՝ կեռ (բառացի՝ մանգաղի պես ուղիղ)

[օրսիմորոն + հեզնանք]

il comprend vite mais il faut lui expliquer longtemps – թանձրամիտ՝ տկարամիտ է, խելացի չէ, արագ չի ըմբռնում (բառացի՝ արագ է հասկանում, բայց երկար պետք է բացատրել)

Ֆրանսերենի խոսակցական ոճին պատկանող դարձվածքներն անսպառ աղբյուր են դարձել գրական ստեղծագործությունների համար՝ մշտապես հարստացնելով դրանք ոճիմաստային ամենատարբեր նրբերանգներով ու հյութեղ արտահայտչականությամբ: Հաճախ դրանց դիմաց գրական տարբերակների բացակայությունը ևս մի նախադրյալ է այդ դարձվածամիավորների կենսունակության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Rey A., Chantreau S. Dictionnaire des expressions et locutions. Paris : Le Robert, 1997.
2. Barlézizian A. Dictionnaire français-arménien des locutions et expressions. Erévan, 2018.
3. Khovanskaia Z., Dmitriéva L. Stylistique française. Moscou: Vyssaya Škola, 1991.
4. Lacotte D. Les expressions les plus truculentes de la langue française. Editions Larousse, 2014.
5. Pouget A. Le pourquoi des choses: origine des mots, expressions et usages curieux. Paris, 2009.
6. Назарян А. Почему так говорят по-французски. М.: Наука, 1968

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Aragon L. Blanche ou l’Oubli. Gallimard, 1967.
2. Audiberti J. L’Effet Glapion. Gallimard, 1959.
3. Barbusse H. Feu (journal d’une escouade), t. 2. Flammarion, 1972.
4. Boudard A. Cinoche. Gallimard, Folio, 1975.
5. Céline L.-F. Le Pont de Londres. 1972.
6. Céline L.-F. Mort à crédit. Pléiade, 1973.
7. Chabrol J.-P. La Gueuse. Plon, 1978.
8. Fallet R. Le Triporteur, J’ai lu. 1958.
9. Fallet R. Un idiot à Paris. Denoël, 1972.
10. Gibeau Y. Allons z’enfants. Livre de poche. Paris, 2006.
11. Giono J. Un roi sans divertissement. Livre de poche, 1966.
12. Guillo F. Le P’tit Francis. Laffont, 1977.
13. Hugo V. Lucrèce Borgia, Œuvres complètes, Ollendorf, t. IV, 1972.
14. Le Roy E. Jacquou le Croquant. Calmann – Lévy, 1977.
15. Leiris M. Frêle Bruit. La Règle du jeu. Gallimard, 1976.
16. Prévert J. Paroles. Gallimard, Folio, 1977.

17. Proust M. A la recherche du temps perdu, t. II. Paris: Pléiade, 1954.
 18. Sergent A. Je suivis ce mauvais garçon. Paris, 1983.
 19. Sergent A. Je suivis ce mauvais garçon. Paris: La jeune Parque, 1986.

Յ. ՍԵՐՅՈՅԱՆ – *Образное своеобразие фразеологических единиц разговорного французского языка (в сопоставлении с армянским)*. – В статье рассматривается один из важных вопросов фразеологии: образное описание фразеологических единиц в сопоставлении с армянскими. На примерах, взятых из словарей и художественной литературы, выявляются семантико-стилистические особенности фразеологизмов разговорного французского языка, которые зачастую красочнее и выразительнее фразеологических единиц литературного французского, не мотивированы и трудно расшифровываются. Сопоставление с армянским в отдельных случаях выявляет некоторое сходство фразеологических образов, что является результатом схожести повседневной жизнедеятельности, а не следствием взаимовлияния или калькирования.

Ключевые слова: фразеология, образность, разговорный французский, разговорный армянский, сопоставление, мотивированность, семантико-стилистические оттенки, культурные особенности

Sh. PETROSYAN – *The Imaginative Uniqueness of Phraseological Units in Colloquial French (cognitive-comparative analysis on the material of French and Armenian)*. – The paper considers one of the important problems of phraseology: the figurative description of phraseological units in comparison with Armenian. It reveals stylistic-semantic peculiarities of phrases of colloquial French (taken from fiction and dictionaries) which prove to be more colloquial and expressive than those of literary French, non-motivated and difficult to decode. The comparison with the Armenian language identifies some similarities of phraseological units, which is not the result of interference or calque; it points out some definite similarities in the lifestyle of people and their activities.

Key words: phraseology, figurativeness, colloquial French, colloquial Armenian, juxtaposition, motivation, stylistic and semantic shades of meaning, cultural features

Ներկայացվել է՝ 26.09.2019
 Երաշխավորվել է ԵՊԼՀ Ռոմանական լեզուների ամբիոնի կողմից
 Ընդունվել է տպագրության՝ 20.11.2019